ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ելույթը հանրակրթական դպրոցների տնօրենների՝ 2016 թ. օգոստոսյան խորհրդակցության ժամանակ

Հարգարժան պարոն Ղուկասյան, հարգելի հյուրեր, տնօրեններ:

Այսօր Արագածոտնի մարզում տեղի է ունենում մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների օգոստոսյան ավանդական խորհրդակցությունը:

Առիթից օգտվելով, բոլորիդ, ինչու չէ, նաեւ՝ մեզ եւ ամբողջ մարզի բնակչությանը շնորհավորում եմ նոր ուսումնասկան տարվա մեկնարկի կապակցությամբ եւ մաղթում եմ մեր ուսուցիչներին ու դպրոցականներին նոր հաջողություններ ու ձեռքբերումներ ուսումնառության դժվարին, բայց պատվաբեր գործում:

Հաշվի առնելով այսօրվա տոնական տրամադրությունը, չեմ ուզում անդրադառնալ բացթողումներին ու թերացումներին, սակայն, այնուամանայնիվ, ուզում եմ նշել և՛ դրական. և՛ բացասական մի քանի խնդիրներ:

Նախ և առաջ, ուզում եմ նշել, որ մարզի 118 հանրակրթական դպրոցների շենքերից շուրջ 90 տոկոսը վերանորոգվել, վերակառուցվել է և նոր ուսումնական տարին դիմավորում են բարեկարգ վիճակում: Էականորեն հարստացվել է դպրոցների նյութատեխնիկական բազան. հատկապես՝ սեղան-նստարաններով և տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորումներով, ինչպես նաև՝ քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատոր սարքավորումներով:

Շենքերի վերանորոգման հետ բարելավվել է նաև դպրոցների ջեռուցման խնդիրը: Նախկինում եթե գրեթե բոլոր դպրոցները ջեռուցվում էին հեղուկ վառելիքով, ապա այժմ միայն 38-ն են հեղուկ վառելիքի վառարանով ջեռուցվում: Մնացած դպրոցներն ունեն լոկալ ջեռուցում, որոնք աշխատում են մեծամամբ՝ բնական գազով, նաև՝ էլեկտրականությամբ:

Պայմանների բարելավման հետ մեկտեղ, կարևորում եմ ուսման և դաստիարակության որակի բարձրացումը, որը հիմնականում պայմանավորված է ուսուցիչների որակական մակարդակի բարձրացմամբ: Մարզի մանկավարժների

տոկոսն ունի բարձրագույն մասնագիտական համապատասխան կրթություն: Որակական մակարդակի վրա իր դրական ազդեցությունն է ունենում նաև կադրերի համալրման նոր կարգը:

Մարզի 1146 շրջանավարտից 523-ը մասնակցել է միասնական քննություններին, որից 428-ը ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Այդուհանդերձ, նույն բանը չեմ կարող ասել ուսման առաջադիմության մասին: Նվազել է առարկայաման օլիմպիադաներին աշակերտների մասնակցությունը: Մինչդեռ, նախկինում, բոլորդ կհիշեք, մենք ունեցել ենք միջազգային օլիմպիադաների մրցանակակիրներ:

Ուզում եմ անդրադառնալ նաև աշակերտների շարժին: Այստեղ, որքան էլ որ արտագաղթի հետ կապված՝ ցավալիորեն պակասում է աշակերտների թիվը, բայց կա արատավոր մի երևույթ ևս, երբ շատ դպրոցներում արտերկիր մեկնած աշակերտների անունները ուշացումով են հանում դասամատյաններից: Էլ չեմ խոսում դրա հետ կապված այլ խնդիրների ու հետևանքների մասին:

Ահավոր արատավոր երևույթներ են նկատվել տարիֆիկացիոն ցուցակներում, հատկապես՝ սպասարկման անձնակազմում: Ուսումնասիրությունների ընթացքում բացահայտվել են այնպիսի երևույթներ, որոնց հետ հաշտվել հնարավոր չէ: Օրինակ, ուսուցիչը կարող է և՝ դասվանդել, և՝ լինել դռնապան, պահակ, հնոցապան: Ինչպես նաև տարիֆիկացիաներում, մասնագետ չլինելի դեպքում, նշանակում են x-ով: Հայտնի չէ՝ այդ առարկաները պարապվել են, թե՝ ոչ, բայց գումարներն աշխատավարձի տեսքով դուրս են գրվել: Այս և նման արատավոր փատերն արդեն իսկ կարգավորված են, և կարծում եմ, որ մեր տնօրենները, արդեն համապատասխան հետևության են հանգել:

Վստահ եմ, որ նոր ուսումնական տարին մուտք ենք գործելու առանց այս և այլ արատավոր երևույթների: